

Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները հրամայական եղանակի համակարգում. բուն հրամայական (եզակի թիվ)

Նոանե Մարգարյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-69>

Հանգուցային բառեր. լեզու, բայ, ածանցավոր բայ, խոնարհում, եղանակ, լծորդություն

Նախաբան

Արևմտահայերենի պահպանման և ուսումնասիրման հարցերը մշտապես եղել են հայ լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Մինչ օրս, սակայն, քննված, համակարգայնորեն ուսումնասիրված և պարզաբանված չեն արևմտահայերենում միջինհայերենյան փոխանցումները, հատկապես եթե արևմտահայերենը դիտարկում ենք որպես միջին հայերենի լեզվական համակարգի անմիջական ժառանգորդ: Առկա ուսումնասիրությունները հիմնականում ընդհանուր գծերով նկարագրում են յուրաքանչյուր շրջափուլի լեզվավիճակը:

Արևմտահայերենում հրամայական եղանակի խոնարհման համակարգում տարբերակվում են բուն և արգելական հրամայականներ: Հրամայականի այս ձևերը իրենց ձևափաստային հատկանիշներով (որոշ փոփոխություններով) արևմտահայերենին են փոխանցվել հիմնականում միջին հայերենից: Գրաբարում առանձնացվում էր նաև հորդորական հրամայական, որը համարվում էր հրամայականի ապառնի ձև և կազմվում էր ստորադասական եղանակի երկրորդ ապառնի ժամանակաձևից, ինչպես *գրեաջի թ, գրեաջի ք, աղաաջի թ, աղաաջի ք* և այլն: Միջին հայերենում հորդորական հրամայականը այլևս չէր գործածվում, քանի որ կիրառությունից դուրս էր եկել ստորադասական ապառնին:

Քննենք բուն հրամայականի եզակի թվի կազմության առանձնահատկություններն ու կրած փոփոխությունները ըստ բայական լծորդությունների:

Ե լծորդության պարզ բայեր: Արևմտահայերենում հրամայական եղանակի *է* լծորդության պարզ բայերն ունեն -*է* վերջավորությունը՝ *գրել-գրէ՛, սիրել-սիրէ՛, լիջել-լիջէ՛* և այլն: Այս նույն վերջավորությամբ *է* լծորդության պարզ բայերի հրամայականի կազմության բազում օրինակներ կարելի է գտնել միջին հայերենում ստեղծագործող հեղինակների երկերում՝ սկսած վաղ միջնադարից:

-*է* վերջավորությունը գրաբարի բուն հրամայականի վերջավորության *ես>է* հնչյունափոխության արդյունքն է: Գրաբարում *է* լծորդության պարզ բայերի բուն հրամայականը կազմվում էր անցյալ կատարյալի շեշտակիր հիմքից՝ *ց* հնչյունի անկումով՝ *գրեաց-գրեա՛, սիրեաց-սիրեա՛, վազեաց-վազեա՛* և այլն: Ըստ Ս. Անթոսյանի՝ -*է*-ով հրամայականի կազմության օրինակներ կան 7-րդ դարի հեղինակներ Սեբեոսի և Հովհ. Մամիկոնյանի երկերում [3, 281], այսինքն՝ *ես>է* անցումը միջին հայերենում միանգամից կատարված երևույթ չէր: Նախամիջինհայերենյան շրջանում առկա այդ օրինակները վկայում են, որ նման կազմությունները կիրառվել են խոսակցական լեզվում, այլ հարց է, որ գրավոր լեզուներթափանցել են միջին դարերից սկսած: 12-րդ դարի հեղինակների երկերում արդեն առկա են նման ձևեր, ինչպես՝ *Լքսէ՛ եղբայր, քաջ կարեւոր, // Առ քեզ նըշան ինքն է բոլոր, // Նա իւղ ունի, կեղեն՝ ոսկոր, // Կըտունեա եւ կեր ըզգտուն աղուոր (Ն. Շնորհայի, էջ 37): Ուրիխութեան ձայն հատեալ է, // Համարձակի բանս ու սաւ, // Ու գրեզ ՚ի սուգս հրավիրէ // Դու ՚ի խորոց ամ հառաչէ (Վ. Հայկազն, էջ 269):*

-*է*-ի ամրակայմանը զուգահեռ՝ միջին հայերենում իրենց գործածությունը պահպանում էին գրաբարյան -*ես* վերջավորությամբ ձևերը, որոնք ժամանակի ընթացքում

հնաբանությունների արժեք էին ստանում, օրինակ՝.... **Շրջեա** համարձակ յանաչառ յահագին հրապարակս նորա (Վ. Այգեկցի, էջ 73): **Սաքրեա** զսիրտ քո յերթալդ քո, եւ տես զփառս քարաքին իմոյ՝ խորանքոր ոչ շարժեսցին ցիցք նորա և անկոխելի են պղծոց հրապարակք նորա (Վ. Այգեկցի, էջ 73):

Միջին հայերենի համար օրինաչափական պետք է համարել -է վերջավորությամբ կազմությունների կիրառությունը: Այս կազմությունները միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում տիրապետող դարձան և փոխանցվեցին արևմտահայերենին:

Բնագրային օրինակներ.

Միջին հայերեն

.... Ապա ի բաղանիս մտո, և այս ջրովս **ծեփէ** (Մ. Հերացի, էջ 9): **Զէտ** մանկակորուստ կաքաւ, ՚ի լեռներն ի շուրջ կուզամ ես.// Լըսեր եմ ակնատ ունիս, բէ՛ր **լարէ՛**, զամ ընկնիմ ի ներս (Քուչակ, ՀԲ, էջ 140): Եկ պիւլպիւլ նիստ վերայ սրտիս.// **Կանչէ** պիւլպիւլ, **կանչէ** հոգիս (Կարապետ դպիր, ՈւՄՀԲ, էջ 406):

Արևմտահայերեն

Յիշէ յիշէ յիշէ՛ ընկրկում չկայ.// Ամբողջ աշխարհը քուկդ է.// Եւ ամբողջ կեանք մը արփաշող պատարագ մը կայ// երկուքիս միջու (Վ. Թերեան, <http://www.grakanter.am/archives/11169>):**Ներէ** երկիր որ քեզ սիրեմ// բայց որ երբեք չկարենամ ապրիլ քու մէջ (Գ. Պըլտեան, էջ 240): - **Լո՛ւէ**, - կըրիսմայէ եւ կըշարունակէ մտիկ ընել (Բատիկեան, <https://graniish.org/kagahandi-heqiat/>):Բայց **քսէ**// հիմա// **քսէ** բառ մը որ ապրեցնէ (Գ. Պըլտեան, էջ 441):

Ի լծորդության պարզ բայեր: Ե լծորդության պարզ բայերի այսպիսի կազմությունը տարածվեց նաև ի լծորդության պարզ բայերի կազմության վրա: Միջին հայերենի առաջին ենթաշրջանում ի լծորդության պարզ բայերը պահպանում էին գրաբարյան կազմության սկզբունքները: Գրաբարում այս լծորդության բայերը հանդես էին գալիս անցյալի շեշտակիր հիմքով՝ երբեմն կորցնելով *ց* հնչյունը՝ *հայիլ-հայեա՛ց-հայեա*, *ողորմիլ-ողորմեա* *ց-ողորմեա*՝ և այլն: Եթե գրաբարում *ց*-ի անկումը հազվադեպ էր, ապա միջին հայերենում այն հաճախադեպ դարձավ: Նույն հեղինակի երկերում երբեմն երկու տարբերակներն էլ առկա են, ինչպես՝ *Կամ բա ց ըզհոգուդ այնոր/ Ու նայեաց ուղորդ ու շիտակ* (Ֆրիկ, Դիւան, էջ 367): *Տէ՛ր, ողորմեա՛ մեղաւորիս, թէ կամենաս առ Քեզ կու զամ* (Ֆրիկ, Դիւան, էջ 255):

Ե լծորդության բայերի ազդեցությամբ աստիճանական զարգացումը ի լծորդության բայերի համար միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում հասավ տրամաբանական ավարտի, և -եա վերջավորությունը հնչյունափոխվեց -է-ի: 15-17-րդ դարերում տիրապետող են -է վերջավորությամբ կազմությունները, իսկ գրաբարաձև կազմությունների կիրառության շրջանակը սահմանափակվում է գրաբարով գրված երկերով: Այսինքն՝ միջին հայերենում *Ի լծորդության* պարզ բայերի համար օրինաչափական պետք է համարել -է վերջավորությունը: Կազմության այս սկզբունքը ժառանգեց արևմտահայերենը:

Բնագրային օրինակներ.

Միջին հայերեն

*Կանանչ կապաւոր մանչո՛ւկ, եզնավի՛ գ, թ՛ի նչ խօշ կու նայիս.// Դարձիր մէկ մ՛ընդ յիս **հայէ՛**, կուլակիր յտպա և իմ հոգիս* (Ն. Քուչակ, ՀԲ, էջ 194): *Լըսէ՛, քսէլիք ունիս, **ողորմէ՛**, գեմ Աստուած ունիս.// Երբ այս անձարակ տեղիս դեմ չիգաս նա այլ չիպիտիս* (Ն. Քուչակ, ՀԲ, էջ

¹ ՀԲ համառոտագրությունը այսուհետ կկիրառվի «Ճարեաններու բուրաստանը» գրքից բերված օրինակների համար:

² ՈՒՄՇԲ համառոտագրությունը այսուհետ կկիրառվի «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.)» գրքից բերված օրինակների համար:

194): Աջօրդ նայէ՛// Դու մեզ ողորմէ՛// Այդ լոյս երեսդ կու փայլէ (Մինաս, ՈւՄՀԲ, էջ 412): Այսօր խօսէ՛ զինչ քեզ պիտի.// Զի է խրնդման օր և շատի (Գ. Երզնկացի, էջ 133): Արևմտահայերեն

Խօրհէ՛, խորացի ը, վերլուծէ՛ քիչ մը (Մ. Պշաբճեան, էջ 46): - Լաւ մը չորս կողմդ նայէ՛, տե՛ս հսկիչ կամ պարտիզպան կա՛յ շուրջերնիս, ես բան մը չեմ տեսներ (Ա. Հայկազ, էջ 4): ...**խօսէ՛** մեզի// միւս շարքերէն// միւս դիէն **խօսէ՛**... (Գ. Պըլտեան, էջ 603): **Մեկնէ՛** անմիջապէս, այլապէս ... (Մ. Պշաբճեան, էջ 77):

Շետաքթրական է, որ նույնիսկ գրաբարում ի լծորդության պարզ բայերը, որոնք պետք է կրավորաձև խոնարհիվեն, -իք չէին ստանում, այլ, ինչպես նշվեց, է լծորդության բայերի նման հանդես էին գալիս շեշտակիր հիմքով [2, 166-167]: Միջին դարերում ի լծորդության բայերը է լծորդության բայերի համաբանությամբ հանդես էին գալիս նաև -իք մասնիկով: Ուշ միջնադարում -իք վերջավորությունը «համաբանության և ընդհանրացման օրենքով տարածվել է ք (պարզ և ածանցավոր) և ի խոնարհման պարզ բայերի վրա» [1, 390]: Այս կազմությունները տիրապետող դարձան արևելահայերենում, և այժմ էլ բուն հրամայականը կազմվում է -իք վերջավորությամբ (նշենք, որ արևելահայերենում ի լծորդության բայերը փոխել են իրենց լծորդությունը՝ վերածվելով է լծորդության), ինչպես՝ խոսի՛ր, նայի՛ր, մեկնի՛ր և այլն: Պատճառն այն է, որ -իք ձևույթը, ու՛վ մասնիկի առաջ գալով, կորցրել էր կրավորական սեռի իմաստ արտահայտելու իր հատկանիշը և կիրառվում էր նաև ներգործական ու չեզոք սեռի բայերի դեպքում: Արևմտահայերենում ևս նշվում է -իք վերջավորությամբ ի լծորդության պարզ բայերի կազմության մասին: Յ. Չոլաքեանի [6, 64] կարծիքով ի լծորդության բայերի համար օրինաչափական և տիրապետող պետք է համարել հենց -իք վերջավորությունը: Լեզվաբանը սա ավելի հարագատ է համարում արևմտահայերենին՝ նշելով, որ -իք վերջավորության տիրույթը շատ լայն է և ընդգրկում է մեծ թվով բայեր, իսկ -է-ի տարածումը արևմտահայերենի որոշ խոսվածքներում կիրառվող ձևերի ընդհանրացման ճիգ է, որ գործադրվում է դասագրքերում: Սակայն, ինչպես ցույց տվեցին դիտարկումները, -է-ն ի լծորդության բայերի համար օրինաչափական և տրամաբանական զարգացման արդյունքում ձևավորված վերջավորություն է³: -էք վերջավորության կիրառությունը արևմտահայերենում կարող է լինել ինչպես արևելահայերենի ազդեցության, այնպես էլ նախկին իմաստի վերադարձումն արդյունք: Մեր ձեռքի տակ եղած՝ արդի արևմտահայերենով գրված ստեղծագործություններում ի լծորդության բայերի հրամայականի վերջավորությունները դիտարկելիս գտել ենք բացառապես -է-ով կազմություններ:

Ե լծորդության ածանցավոր բայեր: Միջին հայերենի առաջին շրջանում այս բայերը պահպանում էին գրաբարյան կազմության օրինաչափությունները և հրամայականում հանդես էին գալիս շեշտակիր արմատական հիմքով, օրինակ՝ մտանել-մո՛ւտ, հասանել-հա՛ս և այլն: Միջին հայերենում է լծորդության ածանցավոր բայերը սկսեցին կիրառվել նաև -իք վերջավորությամբ՝ այլ ածանցավոր բայերի համաբանությամբ, ինչի մասին վերևում արդեն նշեցինք: Այդ կազմությունները տարածվեցին և լայն կիրառություն ստացան 15-17-րդ դարերում, այսինքն՝ միջին հայերենի զարգացման երկրորդ շրջափուլի ընթացքում [1, 389-390], սակայն -իք վերջավորությամբ օրինակներ կարելի է գտնել դեռևս վաղ միջնա-

³ Յ. Չոլաքեանը [6, 64-65] -է, -իք վերջավորությունները համարում է ներգործական և կրավորական ու չեզոք սեռերի տարբերակման միջոց՝ մարէ՛-մարի՛ր: Ստացվում է, որ -է-ի կիրառությունը ևս պահպանվում է, և հրամայականի կազմությունը որոշվում է ըստ խոսքաշարի ու նախադասության բովանդակության, ինչը, կարծում ենք, միայն լրացուցիչ դժվարություններ առաջ կբերի:

դարի աղբյուրներում, ինչպես՝ *Ընկեալ յինէն գոյս եւ առանց երեսաց ամօթոյ մտիք առ Տէր քո* (Վ. Այգեկցի, էջ 73): *Թո՛ղ դ գայս ի բաց վոր հ'աշխարհս կա. գտի՛ր տեղի, ասա՛ մեղա (Ֆրիկ, Ժողովածու, էջ 196):*

Միջին հայերենում որոշակի հնչյունական փոփոխություններ կատարվեցին նաև բայափոխների կազմության մեջ: Մասնավորապես բայափոխի –ան- սուկածանցը ա-ի սղմամբ վերածվեց ն-ի, ինչպես՝ *մտանել-մտնել, գտանել-գտնել, հասանել-հասնել*: Որոշ դեպքերում նկատվում է նաև ն-ի անկում աններածանց բայաձևի առաջացմամբ, ինչպես *մտանել>մտնել>մտել* [1, 148]: Միջին հայերենում սկիզբ առած այս գործընթացը շարունակվում է արևմտահայերենում, որտեղ –ան- սուկածանց ունեցող բայերի շրջանակը նեղացել է, և շատ բայեր վերածվել են աններածանց բայերի, օրինակ՝ *լուծանել-լուծել, օծանել-օծել* և այլն [6, 8]:

Բնագրային օրինակներ.

Միջին հայերեն

*Արե՛կ լուկ առջես **անցիր**. լօք քալէ քալրդ համըրով// Յայնժամ ինձ աղոտր թըլիս, քան որթըն խաղողով (Ն. Քուչակ, ՀԲ, էջ 223): Տէ՛ր, վասն քո աստվածութեանդ, // Հոգըն **հասիր** մեզ հատենին (Ֆրիկ, Ժողովածու, էջ 168):*

Արևմտահայերեն

*Եւ **մտի՛ր** քու սեփական մեծութեանդ գաղտնադռներէն, // Ու հոգիդ ստրկութիւններուն եւ իշխանութիւններուն հետ// գրուցէ գաղտնի (Վ. Թեթեան, 15): Անտառին մէջ դէպի ցո գնա՛ եւ Մինտրէլյան **գտիր** (Պ. Պերպերեան, Պ. Չայկըճըօղլու, 19):*

Ի լծորդության ածանցավոր բայեր: Արևմտահայերենում –իր վերջավորություն են ստանում նաև ի լծորդության ածանցավոր բայերը: Կազմության այս սկզբունքը արևմտահայերենը դարձյալ ժառանգել է միջին հայերենից, որտեղ ընդհանրացավ ածանցավոր բայերի –իր վերջավորությամբ կազմությունը: Դեռևս գրաբարում է լծորդության ածանցավոր բայերից բացի՝ մնացած ածանցավոր բայերը ստանում էին –իր և խոնարհվում կրավորաձև:

Բնագրային օրինակներ.

Միջին հայերեն

*Բայց դու **ուսի՛ր**, սիրելի, զմաստ եւ զխորհուրդ բանիս (Վ. Այգեկցի, էջ 106): Արժան է՛ի թէմուզին գհին այգիքն վաստակել, ոչ յամէն օրն ՚ի բուն, այլ յառաւօտն **սկսիր**, մինչ երեք պահն լինի աւուրն վաստակեա եւ թող (Անանուն, 17):*

Արևմտահայերեն

*Դուն ալ մեզի հետ **փախի՛ր**, Չաւէն, թո՛ղ ստ գարշելի բնակութիւնը. **փախի՛ր** դաժան ու անգութ իշխանի մը քովէն (Մ. Պեշիկթաշյան, 16): Անգամ մը, երկուք բարձրաձայն հագացի՛ ազդարարելու համար գողին, որ պրթնցած եմ եւ կու գամ. **փախի՛ր** (Ա. Հայկլագ, էջ 27):*

Ա խոնարման պարզ և ածանցավոր բայեր: Այս բայերի բուն հրամայականի կազմությունը եական փոփոխություններ չի կրել: Միջին հայերենի զարգացման ողջ ընթացքում պահպանվեց, ապա արևմտահայերենին փոխանցվեց ա լծորդության բայերի բուն հրամայականի կազմության գրաբարյան սկզբունքը. ունենալով բաղադրյալ-ցոյական հիմք՝ պարզ բայերը հրամայականը կազմում էին կատարյալի շեշտակիր հիմքից, իսկ ածանցավոր բայերի անցյալ կատարյալի ցոյական հիմքին ավելանում էր –իր: Ցոյական –աց մասնիկն ավելանում է պարզ բայերի բայարմատին, և ց հնչյունը շեշտի տակ ընկնում է,

⁴ Արդի արևմտահայերենում ի լծորդության ածանցավոր, մասնավորապես սուկածանցավոր, բայերը բավականին քիչ են: Դրանք վերածվել են պարզ, աններածանց բայերի, կամ ածանցները ձուլվել են բայափոխքին և այլևս չեն գիտակցվում, մանրամասն [6, 9, 12-14]:

օրինակ՝ աղալ>աղաց>աղա՛, յուսալ>յուսաց>յուսա՛, կարդալ>կարդաց>կարդա՛ և այն: Ածանցավոր բայերի դեպքում ցոյական մասնիկն ավելանում է ածանցների տեղում, իսկ վերջիններն էլ դուրս են ընկնում, ընդ որում՝ եթե առկա է *-են-* ածանցը, ապա ավելանում է *-եաց-եց՝ մերձենալ>մերձեաց>մերձեցի ի, մոտենալ>մոտեաց>մոտեցի ի* և այլն:

Լեզվի զարգացման տարբեր շրջափուլերում այս լծորդության բայերը բուն հրամայականի բայաձևերի կազմության տարբերություններ չեն դրսևորել: Փոփոխություններ նկատվում են միայն բայահիմքի ածանցներում, մասնավորապես շատ բայերում տեղի է ունեցել հնչյունի անկում, և շեշտից դուրս գտնվող ձայնավորները թուլանալով ընկել են, ինչի արդյունքում *-ան-, -են-* ածանցների *ա* և *ե* հնչյունները սղվել են, օրինակ՝ *գիտենալ-գիտնալ, վախենալ-վախնալ, գողանալ-գողնալ, մոռանալ-մոռնալ, մեծանալ-մեծնալ* և այլն: Արդի արևմտահայերենը ժառանգեց և պահպանեց այդ ձևերը: Ընդ որում՝ և միջին հայերենում, և՛ արևմտահայերենում բուն հրամայականը կազմելիս *-ն-* սուկածանցով բայերի ցոյական հիմքում այս սուկածանցը փոխվում է *ց-*ի, այսինքն՝ կատարվում է *ն>ց* հնչյունների հերթագայություն:

Միջին հայերենում ունենք բուն հրամայականի կազմության այս պատկերը՝

Պարզ բայեր – շեշտված հիմք՝ *ց* հնչյունի անկմամբ

Ածանցավոր բայեր – *-եց, -աց, -ց* ցոյական հիմք+*իր*

Ա լծորդության բայերի բուն հրամայականի միջինհայերենյան կազմության սկզբունքները ամբողջությամբ փոխանցվեցին արևմտահայերենին:

Բնագրային օրինակներ.

Միջին հայերեն

Բմ եա ի, խղճա՛ քո գերուս, քո գերուս՝ մենակ մընայուս (Ն. Քուչակ, ՀԲ, էջ 139): Թափե զգինիդ և լրջացիր// Յեւ հիմացիր գոր տանջելու (Ֆրիկ, Ժողովածու, էջ 183): Միօրեայ ջերմն որ պատճառն ՚ի տաք կերակրոց ընծայի. գիտացիր որ այս պատճառս շատ գլխացավութիւն բերէ, եւ բերանոյն չորութիւն եւ ծարաւ.(Մ. Հերացի, էջ 7): Բա՛ց՝ զիմ սիրտս ու համբուրէ և կըշտացիր սիրովդ հին (Կ. Երզնկացի, էջ 142):

Արևմտահայերեն

.... Շովն ու ես// *գիտցիր*// քեզ խեղդաբար կը գրկենք (Գ. Պըլտեան, էջ 450): *Կարդա՛* եւ

պիտի հասկնաս (Մ. Պչաքճեան, էջ 43): *Սօտեցի ի* աւազանին (Մ. Պչաքճեան, էջ 43):

.... *Սոռցի ի*// տե՛ս (Գ. Պըլտեան, էջ 57):

Ու լծորդության բայեր: Այս լծորդության քիչ թվով բայեր են գործածվում արդի արևմտահայերենում: Գրաբարում սրանց թիվն, իհարկե, անհամեմատ մեծ էր: Ժամանակի ընթացքում այս լծորդության բայերը սկսեցին հանդես գալ կա՛մ այլ լծորդությամբ, կա՛մ փոխարինվել ուրիշ բայաձևերով: Միջին դարերում *ու* լծորդության բայերի գործածությունն արդեն նվազել էր: Միջին հայերենի ինչպես վաղ, այնպես էլ ուշ շրջաններում դրանք կիրառական ակտիվություն չունեին, իսկ կիրառվող ձևերում պահպանվում էին գրաբարյան կազմության օրինաչափությունները: Գրաբարում *ու* լծորդության բայերի անցյալ կատարյալի հիմքը արմատական էր բացառությամբ վեց բայերի՝ *ընկենուլ, ընթռնուլ, զգենուլ, լնուլ, խնուլ, յենուլ*, որոնք ունեին ցոյական հիմք՝ *ընկեց, ընթերց, զգեց, լից, խից, յեց*: Կատարյալի հիմքից բուն հրամայականը կազմելիս պարզ բայերը խոնարհվում էին ներգործաձև՝ հանդես գալով շեշտակիր հիմքով, իսկ ածանցավոր բայերը

⁵ Գրաբարում *բանալ, թանալ* բայերը կատարյալի հիմքում ունենում էին *բաց, թաց* ցոյական ձևերը: Բուն հրամայականը կազմվում էր այս հիմքերի շեշտմամբ՝ *բա՛ց, թա՛ց*: Այս տարբերակները պահպանվեցին միջին հայերենում, ապա փոխանցվեցին արևմտահայերենին:

ստանում էին կրավորաձև խոնարհման վերջավորություններ, օրինակ՝ *զենույ-զեն, հեղույ-հենդ, ջեռնույ-ջեռիք, գարթնույ-գարթիք* և այլն:

Բնագրային օրինակներ միջին հայերենից:

Բարձր բարբառով ընթերցիր զիս եւ պահեա ի միտ քո գոր ուսար յինէն (Վ. Այգեկցի, էջ 73): Դու աւ զոնոցիս ու զմարմիս ՚ի ի դնչէդ պագիկ մի ծախէ. (Ն. Քուչակ, ՀԲ, էջ 169): Ես ինձ տարտեր շատ ունիմ, կամ սիրէ՛ կամ թող զիս ի բաց (Ն. Քուչակ, ՀԲ, էջ 205): Բլբուլն ասէ, թէ՛ Վա թո՛ գարթիք ք.// Ծագէ՛ գրո լոյսդ հասար յերկիր (Կ. Երզնկացի, էջ 120):

Ջարգացման այսպիսի ընթացքը հանգեցրեց նրան, որ միջին հայերենում արդեն սակավ կիրառություն ունեցող *ու* լծորդության բայերը արդի արևմտահայերենում ոճական արժեք են ստացել, հաճախ կիրառվում են որպես հնաբանություններ՝ խոսքին հնության երանգ հաղորդելու նպատակով: Այժմ վկայվում են *ու* լծորդության *երդնույ, գեղույ, զենույ, հեղույ, յենույ, զգենույ, գրօնույ* բայերը, որոնք, սակայն, գուցաևեք կարող են հանդես գալ *զեղել, հեղել, յենիլ, զգենալ, գրօնիլ* ձևերով: *Երդնույ* բայն արդեն փոխարինվել է *երդուիլ* տարբերակով և *երդում ընել* դարձվածքով, որոնցից վերջինը կիրառական ավելի մեծ հաճախակնություն ունի: Ու լծորդության միակ դրսևորումը ներկայի և սահմանական եղանակի ապառնիի ձևերում է՝ *կը գրօնումս, կը հեղուն, պիտի երդնուս* և այլն, մյուս ժամանակների դեպքում այս բայերը փոխարինվում են նոր ձևերով, օրինակ՝ *զեղեցի, երդում ըրի* և այլն: Սակայն պետք է նշել նաև այն, որ «նույնիսկ ամենից գործածական թողուլ բայը չունի ըղձական անցյալի (թողուի, թողուիր, թողուաք, թողուինք և այլն) և հետևաբար դրանից բաղադրվող անկատար անցյալի (կու թողուի, կու թողուայք, կու թողուաք, կու թողուիրք և այլն) և անցյալ ապառնիի (պիտի թողուի, պիտի թողուայք, պիտի թողուաք և այլն) գրաբարին և միջին հայերենին բնորոշ ձևեր: Դրանք դուրս են մղվել գրական արևմտահայերենից, դարձել են հնաբանություններ» [4, 246]:

Արևմտահայերենում *թողուլ* բայը բուն հրամայականում գրաբարի նման հանդես է գալիս շեշտակիր արմատական հիմքով՝ *թող ՚ի՛ ... Մի մտածեր// թող ՚ի գրիչները սենեկապան ... (Գ. Ղըլտեան, էջ 103):* Այժմ առավելապես կիրառվում է որպես վերաբերական, իսկ բայաձևն հաճախ փոխարինվում է *ձգել* բայով՝ *ձգէ՛ զնա* (հմտ. 6, 8)՝ – *Հանգիստ ձգեցէք մեզ (Մ. Պաքճեան, էջ 252):* Միջին հայերենում ևս կարելի է գտնել այսպիսի կիրառություններ՝ *Քանի լաց պահես զայս խղճուկ գերիս.// Չգէ խիղճ ի մտիդ, զեմ աստուած ունիս (Անանու, ՈւՄՀԲ, էջ 15):* Թեև դրանք հաճախադեպ չեն, այնուամենայնիվ, արևմտահայերենի լեզվական համակարգի ձևավորման, առկա ձևերի բացատրման և վերհանման համար ունեն մեծ նշանակություն և արտացոլում են արևմտահայերեն-միջին հայերեն լեզվական համակարգերի կապը:

Թող-ը որպես վերաբերական կիրառվելիս կարող է արտահայտել հրամանի, ցանկության, թույլտվության գաղափար: Հստակնշական է, որ *թողուլ* բայի *թող ՚ի* հրամայական ձևի որպես վերաբերական կիրառության հետքեր միջին հայերենում ևս նկատելի են: Այս շրջափուլում այն որպես վերաբերական կիրառվելիս արտահայտում է նույն նրբմաստունները, ինչ արևմտահայերենում: Ուստի, կարող ենք փաստել, որ իմաստային այս դրսևորումը արևմտահայերենին փոխանցվել է միջին հայերենից, հմտ. միջին հայերեն *Թէ որ կուզես արծաթ, ոսկի.// Թող քո սէրդ ինձ հարամ լինի (Պետրոս, ՈւՄՀԲ, 1986, էջ 308), Ով որ ձերմակ ծոց ունի, թող կապուտ շապիկ հագրնի.// Կոճակն այլ արձակ թողու, ով տեսնու՛ արտիկն արունի (Քուչակ, ՀԲ, 1940, էջ 213): Թէ ինձ կեանք կամ խրնդրութիւն բաժին կայ ի դուռն ի սիրուն.// Մէկ պահու սէրն ի սրբոտ՝ թող լինի ինձ յառաւօտուն (Երզնկացի, 1962, էջ 126), արևմտահայերեն ... Տէտէն պիտի գայրանայ// թող գայրանայ նալլէթ ... (Բ. Բատիկեան, էջ 120): Ոչ ոք թող ըսէ, որ որոշ բաներ իրեն պիտի չպատահին, թէ որոշ բաներ բնաւ պիտի չընէ (Մ. Պաքճեան, էջ 97):*

Այսպիսով, կարող ենք ասել, որ կազմության տեսակետից բուն հրամայականը ավելի

պարզեցվեց միջին հայերենում, ստեղծվեցին ընդհանուր օրինաչափություններ բայերի կազմության համար: Իսկ կատարված փոփոխությունները փոխանցվեցին և ամրակայվեցին արևմտահայերենում: Որպես ամփոփում նպատակահարմար ենք գտնում ներկայացնել բայերի՝ բուն հրամայականով եզակի թվի խոնարհման հարացույց միջին հայերենում և արևմտահայերենում:

Միջին հայերեն

Ե լծ. պարզ – գրել-գրեա՛ /գրե՛

Ե լծ. ածանց. – հասանել-հա՛ն, հասի՛ր

Ա լծ. պարզ – կարդալ-կարդա՛

Ա լծ. ածանց. – հեռանալ-հեռացի՛ր

Բ լծ. պարզ – նայիլ-նայեա՛ց /նայեա՛ /նայե՛

Բ լծ. ածանց. – բունսիլ-բունսի՛ր

Ու լծ. պարզ – առնուլ-ա՛ռ

Ու լծ. ածանց. – երդնուլ-երդուի՛ր

Արևմտահայերեն

Ե լծ. պարզ – գրել-գրե՛

Ե լծ. ածանց. – հասնել- հասի՛ր

Ա լծ. պարզ – կարդալ-կարդա՛

Ա լծ. ածանց. – հեռանալ-հեռացի՛ր

Բ լծ. պարզ – նայիլ-նայե՛ /նայի՛ր

Բ լծ. ածանց. – բունսիլ-բունսի՛ր

Իմաստային բնութագիր: Հրամայական եղանակի քննված բայաձևերը կիրառվում են արտահայտելու հրաման, հորդոր, խնդրանք: Այս եղանակը «յաճախ ըստ առոգանական ձեռի միայն հրամայական է, ոչ ըստ բովանդակութեան. այլապէս՝ այս եղանակով շատ անգամ թելադրանք կամ մեղմ յորդոր է որ կ'արտայայտուի...» [7, 52]: Այդ մեղմ հրամանի իմաստը գրաբարում դրսևորվում էր հորդորական հրամայականի միջոցով: Համատեքստով պայմանավորված՝ այդ գործառույթն ունեին նաև բուն և արգելական հրամայականները: Արգելական և բուն հրամայականի բայաձևերով արտահայտվել են հորդոր-խնդրանքի, հորդոր-պատվերի, հորդոր-հանձնարարության, պահանջի, ուղերձի նրբիմաստներ [5, 62], որոնք, ըստ էության, բնորոշում են հորդորական հրամայականը: Միջին հայերենում, հորդորական հրամայականի դուրս գալուց հետո, իմաստային այդ դրսևորման միջոց շարունակեցին ծառայել բուն և արգելական հրամայականները: Հետաքրքրականն այն է, սակայն, որ այդ իմաստն սկսեցին արտահայտել նաև ըղձական/ստորադասական, հարկադրական, սահմանական եղանակների բայաձևերով: Իմաստային այս առանձնահատկությունը և բայաձևերի նման կիրառությունները նկատելի են նաև արևմտահայերենում: Այսինքն՝ և միջին հայերենում, և՛ արևմտահայերենում առկա են իմաստային նույն յուրահատկությունները: Բնագրային օրինակներ.

Միջին հայերեն

Ծառուկ մը ծաղկած տեսայ, խիստ կարմիր խնձորն էր վըրան.// Իմ տէ՛ր ողորմած Աստուած, դո՛ւն պահես խնձորն ի ծառին (Ն. Քուչակ, ՀԲ, էջ 470): Գաբրիէլական փողոյն հրաման կու տասս.// Լորոզին ննջեցեալքն և գան ի արտաքս (Թայթոս Թոխաթեցի, Ու ՄՀԲ, էջ 495): Ա. ար խաթունութիւն կոյ գայ. եւ դու ան արն պիտի համբերես (Կ. Այգեկցի, էջ 173-174):

Արևմտահայերեն

Պիտի ապրի՝ Ձի թէև ըլլամ անշուք քու որդին ... (Ժազ Ս. Յակոբեան, 20): – Բ՞նջ Արտեմիա: Ո՛չ մէկ Արտեմիա: **Երբանք** այլեւս,– կը կակազեր Շաւարշ՝ շլնորած

(Մ. Պչաքճեան, էջ 29)։– **Խելօք կըլլար**, – կ'ըսէ մաման եւ դուրս կ'ելլեն (Ք. Բատիկեան, 18)։

Հրամայականի և այլ եղանակների կիրառությամբ հրամանի, հորդորի արտահայտումը նկատի ունենալով՝ արևմտահայերենին առնչվող դասագրքերում երբեմն խոնարհման հարացույցներում ընդգրկվել են այլ եղանակների բայաձևեր⁶, երբեմն էլ հստակ բաժանումներ են կատարվել։ Ընդ որում՝ այլ եղանակների պատկանող բայերով արտահայտված հրամանը «կրնայ չուղղուիլ երկրորդ դեմքին, այլ առաջինին կամ երրորդին, այսինքն՝ խօսողին կողմէ՝ ինքնիրեն, կամ ոչ-խօսակից երրորդի մը» [9, 71]։

Եզրակացություն

Այսպիսով, արված վերլուծություններից, ներկայացված բնագրային օրինակներից էլնելով՝ կարող ենք եզրակացնել և ևս մեկ անգամ փաստել, որ

- արևմտահայերենի բուն հրամայականի բայաձևերը, հրամայական եղանակի իմաստային յուրահատկությունները գերազանցապես փոխանցվել են միջին հայերենից,
- միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները համակարգային են և վեր են հանում արևմտահայերենի լեզվական կառուցվածքի շատ առանձա-հատկություններ,
- արևմտահայերենի բուն հրամայականի եզակի թվի է լծորդության է, ի լծորդության է, իր, ա լծորդության ա վերջավորությունները գրաբարի հիմքի վրա ձևավորվել են միջին հայերենում,
- միջին հայերենում սակավ կիրառություն ունեցող ու լծորդությունն արդի արևմտահայերենում արդեն վերածվել է հնաբանության։

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-69>

Գրականություն

1. «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, 496 էջ։
2. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, Հայպետստամանկ հրատ., 1958, 623 էջ։
3. Անթոյան Ս., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 383 էջ։
4. Ավետիսյան Յու., Հայագիտության գուգահեռականներում, ԵՊՀ հրատ, Երևան, 2021, 340 էջ։
5. Յուզբաշյան Ա., Հրամայական եղանակը հին հայերենում, Երևան, Լիմուշ, 2010, 142 էջ։

⁶ Չ. Տոնէլեանը [8, 145] ստորադասական եղանակի հոգնակի առաջին դեմքը տալիս է հրամայական եղանակի խոնարհման հարացույցում՝ օրինակ՝ *սիրէ՛, սիրե՛ նք, սիրեցէ՛ք*։ Բսկ Յ. Քյուրքճեանը [9, 71] տարբերակում է հրամայականի ուղղակի և անուղղակի ձևեր։ Հրամայականի ուղղակի ձևեր է համարում բուն հրամայականի մեզ հայտնի ձևերը՝ *խօսէ՛, սիրէ՛, կարդա՛* և այլն։ Անուղղակի ձևերի մեջ ընդգրկում է այլ եղանակների պատկանող բառերը, որոնցով կարող են արտահայտվել հրամանի գաղափար, օրինակ՝ *թող գայ, չմեծցնենք, պահենք, երթամ* և այլն։

6. Չոլաքեան Յ., Արեւմտահայերէն. կանոնակարգ եւ խնդիրներ, գիրք Բ, Ատողիկ, Երևան, 2019, 152 էջ:
7. Տասնապետեան Ե., Քերականութիւն, Անթիլիաս, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1990, 260 էջ:
8. Ջ., Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի, գիրք Բ, Կ. Պոլիս, Գրատուն Ա. Եազըճեան, 1899, 206 էջ:
9. Քյուրքճեան Յ., Նոր քերականութիւն հայերէն լեզուի (արեւմտահայերէն), Բ տարի, Աթենք, Հայկական հրատ., 1989, 152 էջ:

Աղբյուրներ

1. Այգեկցի Վ., Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ, Երևանի համալս. հրատ., Երևան, 1998, 448 էջ:
2. Այգեկցի Վ., Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, կազմող՝ Մառ Ն., Սանկտ Պետերբուրգ, տպ. Ի. Ն. Սկորոխտով, 1894, 344 էջ:
3. Բատիկեան Բ., Սուփըր հերոսները կը մեռնին ամրան, Ինքնագիր գրական ակումբ, Երևան, 2018, 126 էջ:
4. Երզնկացի Վ., Տաղեր, աշխատասիրոյթամբ՝ Ա. Սրապյան, ՀՍՍՌ ԳԱԱ հրատ., Երևան, 1962, 297 էջ:
5. Հայկազ Ա., Ապրող ծառ մը, Երևան, «Հայաստան», 2012, 320 էջ:
6. Հայկազն Վ., «Բազմավէպ Հանդիսարան», 1873, Գ պրակ Եռամեայ, հ. ԼԱ:
7. Հերացի Մ., Ջերմանց Մխիթարութիւն, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1832, 150 էջ:
8. Ծնորհալի Ն., Յաղագս երկնի և զարդոց նորա: Հանելուկներ: Ողբ Եղեսիոյ, Կազմ., առաջաբ. և ծանոթագր.՝ Գր. Հակոբյան, Երևան, Հայաստան, 1968, 110 էջ:
9. Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.), հ. 1, աշխատասիրոյթամբ Հ. Սահակյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, 755 էջ:
10. Պըլտեան Գ., Սանտրաներ, Սարգիս Խաչենց-Փրինթինֆո, Երևան, 2010, 621 էջ:
11. Պշաքճեան Մ., Երկերու լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, Հայաստան, 2013, 607 էջ:
12. Քուչակ Ն., Հայրեններու բուրաստանը, առաջաբան՝ Ա. Զօպանեան, Հ. Բ. Ը. Միութեան հրատ., Փարիզ, 1940, 550 էջ:
13. Ֆրիկ, Դիւան, աշխատասիրոյթամբ՝ Տիրայր վարդապետ, Նյու Յորք, Հայ բարեգործական Ընդհանուր Միութեան Մեկոնեան հիմնադրամ հրատ., 1952, 756 էջ:
14. Ֆրիկ, Ժողովածու, Պետհրատ, խմբագիրներ՝ Հ. Պետրոսյան, Տ. Խաչվանքյան, Երևան, 1937, 208 էջ:
15. <http://www.grakanter.am/archives/11169>:
16. <https://digilib.aua.am/book/426/446/22315/?lang=en>:
17. <https://digilib.aua.am/book/82/82/782/>:
18. <https://granish.org/kagahandi-heqiat/>:
19. <https://pokrig.org/project/anmoranali/#1550590184852-5970f93d-1745>:
20. <https://www.aztagdaily.com/archives/394619>:

Связи среднеармянского и западноармянского языков в системе повелительного наклонения: императив единственного числа

Нрине Саргсян

Резюме

Ключевые слова: язык, глагол, производный глагол, спряжение, наклонение, сопряжение

Связь между среднеармянским и западноармянским языками проявляется на всех уровнях языка. Рассматривая систему спряжения глагола, можно заметить, что западноармянский язык многое унаследовал от среднеармянского языка. Между среднеармянским и западноармянским языками наблюдается системная связь.

В данной статье анализируется система повелительного наклонения в среднеармянском и западноармянском языках. Следует отметить, что по структуре в среднеармянском языке императив подвергнется упрощению.

Окончания [e], [ir], [a] а также их варианты [jɛ] и [i] в среднеармянском языке сформировались на основе древнеармянского языка, а оттуда перешли в западноармянский язык. Низкая частотность употребления окончания [u] привело к тому, что в современном западноармянском языке это окончание воспринимается как пережиток прошлого и используется только для архаизации речи. Изменения в системе глаголов начались в ранний период существования среднеармянского языка в разговорной речи. В письменность они вошли с первого подпериода развития среднеармянского языка. К этому времени использование новых форм начало распространяться, хотя еще долгое время старые формы сосуществовали наряду с новыми. Во втором подпериоде полностью закрепляются новые версии, которые перешли в западноармянский язык.

Западноармянский язык унаследовал также изменения, произошедшие в основах глагола среднеармянского языка. Изменения наблюдаются в аффиксах основы, в частности, во многих глаголах произошла циркумфлексия фонемы, безударные гласные ослабляются и опускаются, в результате чего звуки [a] и [jɛ] в аффиксах [-an-], [jen] подверглись редукции, например: *գտանել-գտնել* [gtanel-gtnel], *մտանել-մտնել* [mtanel-mtnel], *գիտանել-գիտնել* [gitanal-gitnal], *վախանել-վախնել* [vaχenal-vaχnal] и так далее.

Императив имеет тождественные значения в западноармянском и среднеармянском языках. В западноармянском языке повелительное наклонение выражается также глаголами, которые находятся в разных временных формах. Эта особенность присутствует и в среднеармянском языке.

Connections between the Middle Armenian and Western Armenian Languages in the System of the Imperative Mode: Imperative (Singular)

Nrane Sargsyan

Summary

Key words: *language, verb, derivative verb, conjugation, mode, conjunction*

The connection between the language systems of Western Armenian and Middle Armenian are at different linguistic levels. Considering the verb conjugation system, it can be noted that it was Middle Armenian that mostly influenced the development of Western Armenian language: so, the connection is systematic.

This article is an attempt to present connection of the Middle Armenian and Western Armenian languages in the system of imperative mode. It has been noted that the imperative was simplified in Middle Armenian from the perspective of composition.

The endings է, իր, ա for է, ի, ա conjugations in Western Armenian singular mode are formed in the Middle Armenian inbase of Grabar; then they have transferred into Western Armenian. Conjugation Ու in the modern Western Armenian language has already turned into archaisms that are used for providing a tone of antiquity to the speech.

Changes in the verb system began in the early period of Middle Armenian within the spoken language. Thos changes penetrated into the written language from the first sub-period of Middle Armenian. By this time the use of the new forms had begun to spread, although the old forms were being used alongside the new forms. In the second sub-period, the new versions, that the Western Armenian has inherited, were fully established.

The Western Armenian language also inherited the changes in the affixes of the base, in particular, in many verbs there was a decrease in the phoneme, as a result of which the sounds *u* and *t* of the affixes *-աւ-*, *-էւ-* were shortened, for example *գտանէլ- գտնել*, *մտանէլ-մտնել*, *գիտենալ-գիտնալ*, *վախենալ-վախնալ* etc.

The imperative has saved the same semantic features in both Western Armenian and Middle Armenian languages. In Western Armenian, imperative is also expressed by verbs belonging to other modes; this feature is also characteristic of Middle Armenian.

Ներկայացվել է 15.10.2023 թ.
Գրախոսվել է 01.11.2023 թ.
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.